ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.02.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 01/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Նորք-7» ՍՊԸ-ի 19.01.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-01/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 26.01.2015թ. գրությունը և կից փաստաթղթերը, ի լրումն 19.01.2015թ. բողոքին ներկայացված «Նորք-7» ՍՊԸ-ի 03.02.2015թ. գրությունը, 27.12.2014թ. հրապարակված չկայացած ընթացակարգի մասին հայտարարությունը և ԳԲԽ-01/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 06.02.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Նորք-7» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ներառական կրթության համար սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են և ոտնահարվել են «Նորք-7» ՍՊԸ-ի իրավունքները, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը: Պատվիրատուի կողմից գնման ընթացակարգը չի կազմակերպվել մրցակցային, թափանցիկ,

հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, ինչի պատճառով «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով գնման ընթացակարգը պետք է հայտարարել չեղյալ:

Պատվիրատուն 15.12.2014թ. ուղարկվել է հրավեր-ծանուցում, ինչը ստացել է նաև «Նորք-7» ՍՊԸ-ն և ցանկություն է ունեցել մասնակցելու վերոնշյալ գնման ընթացակարգին:

Պատվիրատուի ուղարկած հրավեր-ծանուցման մեջ նշվել է. «... հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21 հասցեով, 2-րդ հարկ, ընդունարան, Ն. Նուրբեկյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 25-ը ժ. 12:30-ն ներառյալ ...»:

Պատվիրատուն ամբողջությամբ նույն ծածկագրով կիկին ուղարկել է հրավեր-ծանուցում, որի մեջ նշվել է. «... հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21 հասցեով, 2-րդ հարկ, ընդունարան, Ն. Նուրբեկյանին, մինչև 2015թ. հունվարի 12-ը ժ. 10:30-ն ներառյալ ...»:

Սակայն 2014թ. դեկտեմբերի 25-ին Պատվիրատուի կողմից Ընկերության «norq7@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. «... ուղարկում եմ թիվ 85 դպրոցի ընթացակարգի ճշտված հրավերը, որը տեղի կունենա 15.01.2015թ. ժ. 10:30-ին: Նախկին հրավերում աշխատանքային օրերի հետ կապված վրիպակ կար, որի համար հայցում եմ Ձեր ներողամտությունը ...»:

Պատվիրատուի կողմից էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ուղարկված հրավեր-ծանուցման մեջ նշվել է. «... հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21 հասցեով, 2-րդ հարկ, ընդունարան, Ն. Նուրբեկյանին, մինչև 2015թ. հունվարի 15-ը ժ. 10:30-ն ներառյալ ...»:

Ընկերությունը, ցանկանալով մասնակցել «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ներառական կրթության համար սննդամթերքի ձեռքբերման ընթացակարգին, փորձել է հայտը ներկայացնել Պատվիրատուի հրավեր-ծանուցման մեջ նշված օրը, նշված ժամին, նշված հասցեով (ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21 հասցեով, 2-րդ հարկ, ընդունարան, Ն. Նուրբեկյանին 2015թ. հունվարի 15-ին, ժամը 10:30-ն ներառյալ), սակայն դպրոցի կողմից այն չի

ընդունվել, քանի որ գնման ընթացակարգն արդեն իսկ կայացել էր 2014թ. դեկտեմբերի 25-ին:

Ելնելով վերոնշյալ փաստերից՝ «Նորք-7» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, քանի որ Պատվիրատուի ուղարկած առաջին հրավեր-ծանուցման մեջ նշվել է, որ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2014թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ, ինչի պարագայում չէր կարող հրավերում կատարվել փոփոխություն հենց 25.12.2014թ., իսկ Պատվիրատուի ուղարկած նոր հրավեր-ծանուցման համաձայն՝ հայտերը պետք է ներկայացվեին մինչև 2015թ. հունվարի 12-ը ներառյալ, իսկ հետո մինչև 2015թ. հունվարի 15-ը ներառյալ՝ ինչի պարագայում առնվազն անհասկանալի և զարմանալի է «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը չընդունելու պատճառը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը, 26-րդ հոդվածի 4-րդ մասը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից՝ «Նորք-7» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ներառական կրթության համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգը:

Ի լրումն 19.01.2015թ. ներկայացրած բողոքի՝ «Նորք-7» ՍՊԸ-ն 03.02.2015թ. գրությամբ խնդրել է «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգը չեղյալ հայտարարելու անհնարինության դեպքում այն հայտարարել ապօրինի:

2. «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 26.01.2015թ. գրությամբ Ընկերության ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի կողմից 15.12.2014թ.

հայտարարվել է «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով գնման ընթացակարգ՝ ներառական սնունդ ձեռքբերելու համար, որը կայացել է 25.12.2014թ. ժամը 12:30-ին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): «Նորք-7» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու հայտ չի ներկայացրել: Ընթացակարգը կայացել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և հաղթող է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի գումարը նախատեսվածից ավելին էր հրապարակվել, 25.12.2014թ. հայտարարվեց նոր ընթացակարգ և օրենսդրությամբ սահմանված կարգով 27.12.2014թ. հայտարարված նոր ընթացակարգի անցկացումը կասեցվեց, քանի որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ ձեռքբերվեց առժեքի իջեցման համաձայնություն: Ընկերությունն առանց հետևելու www.gnumner.am համացանցային կայքին, որտեղ 25.12.2014թ. համար նախապես հայտարարված (երկու օր հետո՝ 27.12.2014թ. կասեցված) ընթացակարգին մասնակցելու նպատակով այցելել է դպրոց, որտեղ իրեն պատասխանել են, որ 25.12.2014թ. հայտարարված և 15.01.2015թ. կայանալիք մրցույթը կասեցվել է, քանի որ նախորդ մրցույթը կայացել է առանց օրենսդրական պահանջների խախտման, և որ անհրաժեշտ էր հետևել վերը նշված կայքին, որտեղ ամեն ինչ տեղադրված է եղել:

«Նորք-7» ՍՊԸ-ն նախորդ՝ 25.12.2014թ. գնման ընթացակարգին մասնակցելու հայտ չի ներկայացրել, իսկ երկրորդ՝ 25.12.2015թ. հայտարարված ընթացակարգի մասով, չի հետաքրքրվել և տեղեկացված չի եղել www.gnumner.am կայքում տեղադրված փոփոխություններին, որի հետևանքով 15.01.2015թ. եկել է մասնակցելու կասեցված ընթացակարգին:

Պատվիրատուն ընդունել է, որ իր կողմից բացթողում է եղել երկրորդ անգամ գնման ընթացակարգ հայտարարելը, սակայն գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-01/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 06.02.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Նորք-7» ՍՊԸ-ի 19.01.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-01/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-01/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սամվել Շահմուրադյանի անվան հ. 85 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներառական կրթության համար սննդամթերք ձեռքբերելու նպատակով կազմակերպվել է «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 25.12.2014թ. ժամը 10:50-ին և 12:25-ին հայտեր են ներկայացրել «Լիագա պլյուս» և «Ֆոտոն» ՍՊ ընկերությունները:

2. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, ինչի վերաբերյալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով ընդունվել է որոշում:

3. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների հիման վրա գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացվել 1-ին տեղ զբաղեցրած, հաղթող մասնակից ճանաչել «ֆոտոն» ՍՊԸ-ին:

4. Հիմք ընդունելով Պատվիրատուի գլխավոր հաշվապահի տեղեկությունն այն մասին, որ փաթեթների քանակը հաշվելիս տեղի է ունեցել վրիպակ, Ընթացակարգի գումարն ավելին է հրապարակվել, քան նախատեսված էր, գնահատող հանձնաժողովը 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 13:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացրել՝ նույն ծածկագրով նոր ընթացակարգ հայտատարելու և 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին կայացած ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին:

5. Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 13:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ ընդունած որոշումից հետո Պատվիրատուի կողմից ուղարկվել է հրավեր-ծանուցում այն մասին, որ «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 21 հասցեով, 2-րդ հարկ, ընդունարան, Ն. Նուրբեկյանին, մինչև 2015թ. հունվարի 12-ը, ժամը 10:30-ն ներառյալ, իսկ նույն օրը՝ 2014թ. դեկտեմբերի 25-ին,

ժամը 14:26-ին կրկին ուղարկված հրավեր-ծանուցմամբ մասնակիցներին տեղեկացվել է, որ «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով հայտերն անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ հասցեով մինչև 2015թ. հունվարի 15-ը:

6. Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 27-ին ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է ընդունվել 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին կայացած ընթացակարգն իրավազոր համարելու և նույն ծածկագրով 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 13:30-ին հայտարարված նոր ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ վերոհիշյալ ծածկագրով 2014թ. դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին ընթացակարգը կայացել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

7. Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 27-ին ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ ընդունած որոշումից հետո նույն օրը Պատվիրատուի կողմից «www.gnumner.am» կայքում հրապարակվել է հայտարարություն՝ գնման պահանջը վերանալու հիմքով հայտարարված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

8. 2014թ. դեկտեմբերի 15-ին հայտարարված և նույն թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 12:30-ին կայացած «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ, վերջինիս կողմից Ընթացակարգին առաջարկված նույն գնային առաջարկով, 12.01.2015թ. կնքվել է ներառական կրթության սննդամթերքի գնման «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» պայմանագիրը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն սկզբունքների վրա:

Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն. «...փաստաթղթային ձևով գնում կատարելու դեպքում... հայտերի բացման նիստը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին...»:

Գտնում ենք, որ Ընթացակարգի արդյունքում Պատվիրատուի կողմից չեն խախտվել բողոքաբերի վկայակոչած վերոնշյալ իրավական նորմերի պահանջները, այդ թվում բողոքաբերի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը, քանի որ «Նորք-7» ՍՊԸ չի մասնակցել 2014թ. դեկտեմբերի 15-ին հայտարարված և նույն թվականի դեկտեմբերի 25-ին կայացած ընթացակարգին, իսկ Ընթացակարգն անցկվել է մրցակցային, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, որին մասնակցելու համար հայտեր են ներկայացրել «Լիգա պլյուս» և «Ֆոտոն» ՍՊ ընկերությունները, և Ընթացակարգի արդյունքներով 1-ին տեղն զբաղեցրած՝ հաղթող է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, որի հետ 12.01.2015թ. կնքվել է ներառական կրթության սննդամթերքի գնման թիվ «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» պայմանագիրը:

Ինչ վերաբերում է «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը 2015թ. հունվարի 15-ին չընդունելու հանգամանքին, ապա տվյալ պահի դրությամբ Ընկերության հայտը չէր կարող ընդունվել, քանի որ 2014թ. դեկտեմբերի 25-ին հայտարարված «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ կասեցվել էր, իսկ 2014թ. դեկտեմբերի 15-ին հայտարարված «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով ընթացակարգը նույն թվականի դեկտեմբերի 25-ին արդեն կայացել էր, որը անցկացվել էր մրցակցային, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով և Ընթացակարգի արդյունքներով 1-ին տեղն զբաղեցրած՝ հաղթող էր ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, որի հետ 12.01.2015թ. կնքվել էր ներառական կրթության սննդամթերքի գնման թիվ «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ 2014թ. դեկտեմբերի 15-ին հայտարարված «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով Ընթացակարգը կայացել

է Օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջների պահպանմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ «85ԴՊ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/1» ծածկագրով Ընթացակարգը չեղյալ կամ ապօրինի հայտարարելու հիմքեր առկա չեն

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նորք-7» ՍՊԸ-ի 19.01.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամ՝ **Հրաչյա Ավետիսյան**